


Շրջան և շրջանագիծ

Շրջանագիծը անվագոտուն(անիվի արտաքին եզրը) նմանվող պատկերն է:
Շրջանագիծը այնպիսի ներփակ գիծ է, որի բոլոր կետերը նույն հեռավորությունն ունեն մի կետից. այդ կետը կոչվում է շրջանագծի **կենտրոն**:



Շրջանագիծ



Շրջանագծի շառավիղը շրջանագծի որևէ կետ կենտրոնին միացնող հատվածն է:

Լարը շրջանագծի որևէ 2 կետեր միացնող հատվածն է:

Տրամագիծը շրջանագծի կենտրոնով անցնող լարն է:

Տրամագիծը շրջանագծի ամենաերկար լարն է և 2 անգամ մեծ է շառավիղից:

Աղեղը շրջանագծի այն մասն է, որը գտնվում է նրա ցանկացած 2 կետերի միջև:

Շրջանը հարթության այն մասն է, որը սահմանափակված է շրջանագծով:



Շրջանի ձև ունեն, օրինակ՝ մետաղադրամը, լիալուսինը:

Շրջանագիծը գծելու համար օգտվում են կարկինից:



Միրելի սովորողներ այսօրվա ձեր աշխատանքը սա է:

Առաջադրանքներ

1. Գծեք մի շրջանագիծ, որի շառավիղը 4 սմ է: Ինչի՞ է հավասար այդ շրջանագծի տրամագիծը:
2. Գծեք մի շրջանագիծ, որի տրամագիծը 10 սմ է: Ինչի՞ է հավասար այդ շրջանագծի շառավիղը:
3. Գծե՛ք մի շրջանագիծ: Ապա տարե՛ք 3 ուղիղ այնպես, որ 1-ին ուղիղը չհատի շրջանագիծը, 2-րդը շրջանագծի հետ ունենա 1 ընդհանուր կետ, իսկ 3-րդը՝ 2 ընդհանուր կետ:
4. 2 շրջանագծի կենտրոնների հեռավորությունը 10 սմ է: Շրջանագծերի շառավիղներն են՝ 2 սմ և 5 սմ: Կհատվե՞ն արդյոք այդ շրջանագծերը:

5. 2 շրջանագծի կենտրոնների հեռավորությունը 7 սմ է: Շրջանագծերի շառավիղներն են՝ 3 սմ և 4 սմ: Կհատվե՞ն արդյոք այդ շրջանագծերը:
6. 2 շրջանագծի կենտրոնների հեռավորությունը 9 սմ է: Շրջանագծերի շառավիղներն են՝ 5 սմ և 7 սմ: Կհատվե՞ն արդյոք այդ շրջանագծերը:
7. Ուղիղը հատում է շրջանագիծը A և B կետերում: Ի՞նչ կետով պետք է անցնի այդ ուղիղը, որպեսզի AB հատվածն ունենա հնարավոր ամենամեծ երկարությունը:
8. Որտե՞ղ է գտնվում այն կետը, որի հեռավորությունը շրջանագծի կենտրոնից հավասար է շրջանագծի շառավիղին:
9. Գծեք մի շրջանագիծ, նրա վրա նշեք մի կետ և այդ կետից տարե՛ք տրամագիծ, շառավիղ և լար: Համեմատե՛ք դրանք: Ո՞րն է դրանցից ամենաերկարը, իսկ ո՞րը ամենակարճը:
10. Գծե՛ք 2 սմ շառավղով մի շրջանագիծ: Դրա մեջ նշե՛ք մի A կետ, իսկ նրանից դուրս՝ մի B կետ: Համեմատե՛ք շրջանի կենտրոնից այդ կետերի ունեցած հեռավորությունները շրջանի շառավղի հետ: AB հատվածը կհասի՞ արդյոք շրջանագիծը:

